«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

25 Սեպտեմբերի 2021, N 4 - 1 (հարցման կարգով)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է**.

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2021 թվականի հունվարի 22-ի N 6 - 2 որոշմամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ներքին կարգապահական կանոններում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Համալսարանում աշխատանքային կարգապահության երաշխիք են գործատուի կողմից անհրաժեշտ կազմակերպական և տնտեսական պայմանների ապահովումը, ինչպես նաև բարեխիղճ աշխատանքի խրախուսումը և աշխատանքային կարգապահությունը խախտողների նկատմամբ կարգապահական ներգործության համարժեք միջոցների կիրառումը, առանց որևէ խտրականության՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի

գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:».

2) 24-րդ կետը 7-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ և 9-րդ ենթակետերով՝

«8) աշխատանքի ներկայանալիս համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժին ներկայացնել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը,

9) սույն կետի 8-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում համալսարանի ռեկտորին ներկայացնել գրավոր բացատրագիր (զեկուցագիր):».

3) 24-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 24.1-ին կետով՝

«24.1. Մինչև սույն կանոնների 24-րդ կետի 8-րդ ենթակետով նախատեսված պարտականության խախտումը վերացնելը յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատանքի ներկայանալը համարվում է որպես առանձին (ինքնուրույն) կարգապահական խախտում:».

4) 28-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 28.1-ին կետով՝

«28.1. Համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը ապահովում է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի

Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգումը աշխատանքի ներկայանալիս, ինչպես նաև սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարումը և դիտարկումների իրականացումը:

Համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլ տված անձի վերաբերյալ տվյալները մեկ աշխատանքային օրվա ժամկետում ներկայացնում է համալսարանի ռեկտորին:» (նոր խմբագրությամբ հաստատված կանոնները կցվում են):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

2021 թ. սեպտեմբերի 25

Երևան